ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Գորիս 29.11.2022 թ.

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ռեկտոր Տիգրան Վանդունցի, մի կողմից, և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության **Գորիսի տարածքային կենտրոնը** (այսուհետ՝ Կենտրոն), ի դեմս տնօրեն Վարուժան Ալեքսանյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հուշագրի նպատակը ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ֆինանսավորվող և Համալսարանի կողմից իրականացվող «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») արդյունքների համատեղ օգտագործմամբ գործընկերային հարաբերությունների հաստատումն է:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ Ծրագրի արդյունքների մասին տեղեկությունների տրամադրումը Կենտրոնին, համատեղ ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկում և կազմակերպում:

բ/ Ծրագրի շրջանակներում մշակված էլեկտրոնային առցանց դասընթացների ներառում աշխատանք փնտրողների համար Կենտրոնի կողմից իրականացվող ուսուցման ծրագրերում:

գ/ Կողմերի իրականացրած համատեղ հետաքրքրություն ներկայացնող միջոցառումներին փոխադարձ մասնակցություն:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կողմերը համաձայնում են իրականացնել իրենց պարտավորությունները սույն Հուշագրի դրույթներին համապատասխան:

3.2. Համալսարանը պարտավորվում է՝

3.2.1. Կենտրոնին տրամադրել աշխատաշուկայում երիտասարդների արդյունավետ ներգրավման համար անհրաժեշտ հմտություններ և կարողություններ ապահովող հետևյալ էլեկտրոնային առցանց դասընթացները.

- Անգլերեն լեզու (բազային) (32 ժամ)
- Մենեջմենթ (բազային) (20 ժամ)
- Համակարգչային հմտություններ (20 ժամ)
- Թվային դասավանդման հմտություններ (20 ժամ)
- Ադրբեջաներեն (բազային) (47 ժամ)

3.2.2. Աջակցել և նպաստել Կենտրոնի կողմից իրականացվող զբաղվածության ծրագրերում վերոնշյալ էլեկտրոնային դասընթացների ինտեգրման գործընթացին՝ ելնելով կարիքներից:

3.3 Կենտրոնը պարտավորվում է՝ ելնելով անհրաժեշտությունից, Համալսարանին տրամադրել տեղեկատվություն աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկացնել նախատեսվող և ընթացիկ միջոցառումների մասին:

4. ՀՈՒՇԱԳԻՐՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական և իրավական պարտավորություն չի առաջացնում:

5.2. Կողմերը համաձայնում են, որ տեղեկատվական և/կամ լրատվական հարթակներում Ծրագրի արդյունքների մասին հիշատակելիս պետք է նշեն, որ Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդական քաղաքականության համատեքստում:

6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

«Գորիսի պետական համալսարան»
ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Գորիս, Ավանգարդ 2
Էլ. փոստ՝ gorsu1967@gmail.com
Հեռ.՝ +374098196701
Ռեկտոր՝
Տիգրան Վանդունց

Կ.Տ.

Միասնական սոցիալական ծառայության
Գորիսի տարածքային կենտրոն
Հասցե՝ ՀՀ, ք. Գորիս, Մաշտոցի 3
Էլ. փոստ՝ goris@socservice.am
Հեռ.՝ +37477000047
Տնօրեն՝
Վարուժան Ալեքսանյան

Կ.Տ.